

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ԿԳՄՍՆ Գյուժիրու թիվ 1 ավագ դպրոց

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գրելու կարողությունների զարգացման ապահովումը տարրական դասարաններում

Կատարող՝ Նանա Գագիկի Բերնեցյան
«Գյուժիրու Գր. Լուսավորչի անվան թիվ 31 հիմնական դպրոց» ՊՈԱԿ,
դասվար

Ղեկավար՝ Անահիտ Փարկիթյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

3

ԳԼՈՒԽ I

ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

ՆԱԽԱԴԱՅՄԱՆՆԵՐԸ.....

4

1.1. Գրաճանաչության ուսուցման նախալրարական շրջանի կրթադաստիարակչական

առանձնահատկությունները.....4

1.2. Գրաճանաչության ուսուցման այբբենական շրջանի կրթադաստիարակչական

առանձնահատկությունները.....10

1.3. Գրաճանաչության ուսուցման հետալրարական շրջանի

կրթադաստիարակչական առանձնահատկությունները.....13

ԳԼՈՒԽ II

ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՋՈՐԴԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 1-4-ԲԴ

ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ.....14

2.1. Ուսուցանող գրավոր աշխատանքների կազմակերպումը.....14

2.2. Կետադրության

ուսուցումը.....18

Եզրակացություններ.....

.20

Օգտագործված

գրականության

ցանկ.....21

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Աշխատանքի արդիականությունը: «Մայրենիի» տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկը գրելու կարողությունների զարգացումն է, գրավոր խոսքի մշակումը: Ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքի դրսևորման հիմք և ելակետ են բառապաշարը, լեզվական տարրական գիտելիքները և խոսք կառուցելու կարողությունները: Ի տարբերություն բանավոր խոսքի՝ գրավոր խոսքի առանձնահատուկ կողմերն են ուղղագրությունը և կետադրությունը, առանց որոնց գրավոր խոսքը զրկված կլինի հաղորդակցման միջոց լինելու առանձնահատկությունից:

Կրթական նպատակների այս ձևակերպումն ու ընդունումը պահանջում են մշակելու ուսուցման և դասավանդման այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք կօգնեն «Մայրենիի» դասընթացի բովանդակությունը ծառայեցնելու կրտսեր դպրոցականների՝ գրելու կարողությունների ձևավորման և զարգացման, գրավոր խոսքի մշակման զարգացման և ամրապնդման գործին:

Աշխատանքի **նպատակն է** ուսումնասիրել տարրական դասարաններում սովորողների գրելու կարողությունների ձևավորման, զարգացման ժամանակակից մոտեցումները մայրենիի ուսուցման գործընթացում և մշակել գրելու կարողությունների ձևավորման ու զարգացման, գրավոր խոսքի ուսուցման առաջարկություններ, որոնք կբխեն ծրագրային կյանքի բովանդակությունից:

Այդ նպատակն իրականացնելու համար առաջադրել ենք հետևյալ **խնդիրները**.

1. Ավանդական և ժամանակակից մասնագիտական գրականության ուսումնասիրում:
2. Ավանդական և ժամանակակից մեթոդների վերլուծություն-համեմատություն:

3. Նշված մեթոդների կիրառմամբ գրելու կարողությունների ձևավորումն ու զարգացումն ապահովող դասերի, վարժությունների, գործնական աշխատանքների կազմում:

Աշխատանքը բաղկացած է 21 համակարգչային էջից: Այն ընդգրկում է ներածություն, երկու գլուխ, եզրակացություն, օգտագործված գրականության ցանկ:

ԳԼՈՒԽ I

ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1.1. Գրաճանաչության ուսուցման նախալրբենական շրջանի կրթադաստիարակչական առանձնահատկությունները

Գրելը՝ որպես խոսքային գործունեության ինքնուրույն տեսակ, լեզվի գրաֆիկական նշանների (տառերի) միջոցով մտքերի գրավոր ձևակերպումն ու արտահայտումն է: Գրելու գործընթացում անհրաժեշտ է տարբերակել երկու ելակետային կողմ՝

- գրելու տեխնիկան (գրություն),
- մտքերը գրավոր արտահայտելու, գրավոր հաղորդակցվելու կարողությունը:

Գրելու տեխնիկան ներառում է՝

- ձեռագիր ու տպագիր տառագրության կարողություններ (տառեր, տառակապակցություններ), այդ թվում նաև գեղագրություն,
- ուղղագրություն, ուղղագրական կանոնների տիրապետում,
- կետադրություն, կետադրական կանոնների տիրապետում՝ որպես գրավոր խոսքի տրամաբանական շղթայի օղակների առանձնացման, ինչպես նաև բանավոր խոսքի հատուկ հնչերանգների արտացոլման միջոց:

Մտքերը գրավոր արտահայտելու կարողությունը ենթադրում է ապահովել.

- խոսքի բովանդակային և հուզական կողմը,
- խոսքի կապակցվածությունը և տրամաբանական կապը,
- խոսքի համապատասխանությունը հաղորդակցական նպատակին և իրադրությանը:

2006 թվականից մայրենի լեզվի տարրական դասընթացն ուսուցանվում է 1-4-րդ դասարաններում և ունի դասավանդման հետևյալ հաջորդայնությունը.

1-ին դասարան՝ «**Գրաճանաչություն**» և «**Ընթերցանություն**» բաժիններ՝ իրենց ենթաբաժիններով.

1.«**Գրաճանաչություն**» բաժինը բաղկացած է՝

- Նախայբբենական շրջանից, որն ընդգրկում է խոսք և պատմություն, Նախադասություն, Բառ, Վանկ, Հնչյուն և Տառ բաժինները,
- այբբենական շրջանից, որն իր մեջ ներառում է տառուսուցումը և կարդալու տարրական կարողության ձևավորումը,
- հետայբբենական շրջանից, որի ընթացքում ամրակայվում են կարդալու և գրելու կարողությունները:

2.«**Ընթերցանություն**» բաժինն ունի հետևյալ բաղադրամասերը՝

- կարդալու հմտություններ,
- աշխատանք տեքստի վրա,
- կապակցված խոսք,
- լեզվական տարրական գիտելիքներ,
- գրական ունկնդրում:

Մայրենիի առաջին դասարանի **Նախայբբենական շրջանը** նպատակաուղղված պետք է լինի երեխայի սոցիալականացմանը, ինքնարտահայտման կարողությունների, բազմաբնույթ մտածողության դրսևորմանն ու զարգացմանը:

Առաջին դասարանում ուսուցչի գերինդիրն է ճիշտ խոսելու և ճիշտ գրելու հիմքերը դնել: Երեխաները դպրոց են մտնում խոսքային տարբեր բարդություններով: Ոմանք հնչյունները ճիշտ չեն արտաբերում, ոմանք որոշ հնչյուններ ընդհանրապես չեն լսում, ոմանք բառերն իրար վրա են հավաքում, որի հետևանքով խոսքը չի հասկացվում: Հետևաբար նախագրային փուլը պիտի տրամադրվի խոսքի շտկմանը:

Նախայբբենական շրջանում պետք է դրվի նաև աշակերտի զգայարանների և ֆիզիկական համակարգի զարգացման հիմքը, քանի որ նա այս փուլում աշխարհը լավ է ընկալում զգայարաններով և շարժման մեջ:

Տեսողական հիշողության և ուշադրության զարգացման նպատակով նախայբբենական շրջանում կարելի է հանձնարարել նկարել ուսուցչի պատմած որևէ գրավիչ պատմության դուր եկած հատված, տարվա համապատասխան եղանակին՝ աշնանը, ուսումնասիրել բնությունը, ասել աշնանը բնորոշ բառեր, նկարել դրանք և

անպայման հիմնավորել ընտրած գույները, նկարել դասասենյակը, սեփական բնակավայրը, խաղալիքը, տրված պատկերներում գտնել «ավելորդը (ները)» և այլն:

Լսողության զարգացման նպատակով կարելի է բնաձայնական տարաբնույթ վարժություններ կատարել, խաղեր կազմակերպել՝ ջրի, քամու, անձրևի ձայներն արտաբերելով, կարելի է փակ աչքերով ձայնի ուղղությամբ շարժվելով վարժություններ կատարել, ռիթմի զգացողությունը զարգացնող վարժություններ կատարել, ինչպես օրինակ՝ որևէ բանաստեղծություն անգիր ասել՝ տրված հրահանգներին համապատասխան (լացակումած, շնչակտուր, վանկատելով), աչքերը փակ հաշվել դասընկերների ռիթմիկ կամ անկանոն քայլերը:

Շոշափելիքի զգայարանների զարգացման նպատակով կարելի է բնութագրել տարբեր բնական նյութեր, շոշափելով բացատրել զգացողությունները, նրանց որակական հատկանիշները, փակ աչքերով փորձել գուշակել, թե ի՞նչ նյութ է շոշափում, հիմնավորել, թե ինչու՞ է համոզված, որ ճիշտ է իր կարծիքի մեջ և այլն:

Շարժողունակության զարգացման նպատակով կարելի է կազմակերպել խաղեր, որոնք նախատեսում են արագության և տեմպի անընդմեջ փոփոխություններ, օրինակ՝ աջ ձեռքով բռնել ձախ ծունկը, ձախ ձեռքով բռնել աջ սրունքը, հատկացված որոշակի ժամանակահատվածում դասավորել պայուսակը կամ պայուսակից հանել անհրաժեշտ պարագաները: Այս ամենը կարելի է ուղեկցել սուտասելուկների, շուտասելուկների, հանելուկների, խաղիկների արագ արտասանության մրցույթներով, կարելի է հանձնարարել արագ հաշվել բանաստեղծության բառերը, տառերը և այլն:

Մինչև բուն գրաճանչությունն սկսելը պիտի համակարգված աշխատանք տանել նաև երեխաների մտածողության բաղադրիչների զարգացման ուղղությամբ, հետո միայն կարևորել գիտելիքների պաշարը: Չարգացման, քանի որ մինչև դպրոց գալը փոքրիկներն անառարկելիորեն ունեն համեմատելու, հակադրելու, վերլուծելու, ընդհանրություններն ու տարբերությունները գտնելու, դասակարգելու, եզրահանգելու կարողություններ, սակայն դրանք դեռևս զարգացման անհրաժեշտ մակարդակի վրա չեն գտնվում: Այդ աշխատանքները պիտի կատարվեն ինչպես այբբենարանի թելադրած խնդիրներից, նրանում ընդգրկված առաջադրանքներից անկախ, այնպես էլ այբբենարանում զետեղված նյութերի, նկարների, նկար-նախադասությունների շուրջ աշխատելիս: Այդ նպատակով պիտի կարևորել ոչ միայն այս կամ այն նկարի բովանդակությունը պատմելը կամ նկար-բառերի ու նկար-նախադասությունների լեզվական վերլուծությունը, այլ դրանցում ներկայացված դեպքերի հաջորդականության տրամաբանությունը որոշելը՝ *ինչու՞ այդպես եղավ, ի՞նչ կլիներ, ի՞նչ է տեղի ունեցել որ նկարում պատկերված չէ, ինչպիսի՞ն է ըստ քեզ նկարում պատկերված*

հերոսը, ինչու՞ ես այդպես կարծում, իսկ դու ի՞նչ գույներ կօգտագործեիր և նման այլ հարցերի պատասխանների ձևակերպումը:

Այս շրջանում նախնառաջ աշխատանք է տարվում աշակերտների բանավոր խոսքի հղկման, զարգացման ուղղությամբ: Դրա համար կարելի է օգտագործել տարաբնույթ միջոցներ՝ հենվելով աշակերտների տարբեր զգայարանների վրա: Կարելի է ցուցադրել ինչ-որ նկար կամ պատկեր, դիտել մուլտֆիլմ կամ այլ տեսանյութ, ունկնդրել ձայնագրություններ, համտեսել ու հոտ քաշել ինչ-որ առարկաներից, շոշափել դրանք: Այս ամենից հետո ուղղորդող հարցերի օգնությամբ պետք է աշակերտներին ստիպել նկարագրել իրենց տեսածը, լսածն ու զգացածը:

Նախաայբբենական շրջանում ուսուցանվող նյութի բովանդակային կողմը ներառում է տարաբնույթ գիտելիքներ լեզվի տարբեր միավորների մասին: Նախաայբբենական և այբբենական շրջանում ուսումնական նյութի ճիշտ հաջորդականությունը համարվում է **պատմություն-նախադասություն-բառ-վանկ-ինչյուն-տառ** շղթան: Դրանք փոխանցվում են վերլուծական-համադրական մեթոդներով:

Այս տարիքում աշակերտներին պետք է սովորեցնել՝ ինչ է պատմությունը: Նրանք պետք է վարժվեն պատմություն լսելուն և ընկալեն պատմությունը որպես առանձին միավոր, մտքերի ամբողջություն: Պատմելուն զուգահեռ կարելի է ցուցադրել նկարներ, միացնել պատմության բովանդակությանը համահունչ ձայնագրություններ, բնաձայներ, կենդանիների ձայներ, մեղեդիներ և այլն, օգտագործել նոր տեխնոլոգիաների ընձեռնած հնարավորությունները՝ տարատեսակ մուլտիմեդիոն միջոցները: Այս պարագայում հնարավորինս շատ ուղղություններով ենք ազդում աշակերտի վրա (տեսողական, լսողական և այլն): Երբ արդեն աշակերտը սովորում է պատմություններ լսել ու ըմբռնել, կարելի է նրանց ևս մասնակից դարձնել պատմությանը. կանգ առնել ու խնդրել, որ աշակերտը հանպատրաստից շարունակի պատմությունը, աշակերտներին դարձնել պատմության հերոսներ և այլն:

Պատմությունները կազմված են նախադասություններից: Առաջին դասարանի աշակերտի համար, սակայն, դրանք տարբերակելը դժվար կլինի: Դրա համար անհրաժեշտ է պատմության կազմի մեջ մտնող նախադասությունները կարդալ արտահայտիչ, շեշտված ու ընդգծված այնպես, որ աշակերտները հասկանան դրանց՝ առանձին միավորներ լինելը և յուրաքանչյուր միավորի ավարտին ծափ տան¹: Ծափերի միջոցով աշակերտները կհասկանան, թե քանի մասից էր կազմված պատմությունը:

¹Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Զանգակ» հրատ., 2015, էջ 43:

Կարելի է մոդելավորել պատմությունը բազմաթիվ այլ ձևերով: Օրինակ՝ կարելի է պատմության մաս դարձնել հենց աշակերտներին: Պատմությունը կներկայացնենք որպես գնացք, իսկ նրա վագոնները կլինեն աշակերտ-նախադասությունները: Կարողավ պատմության մեջ մտնող նախադասությունները առանձին, շեշտված ու հաջորդաբար՝ կիրահանգենք նախադասություն-աշակերտներին գալ և կազմել գնացքը: Այն կշարժվի, եթե վագոնները ճիշտ դասավորված լինեն: Կկարդանք պատմությունը, և աշակերտները կհասկանան, թե ով որտեղ է կանգնելու: Այս եղանակով էլ կբացատրենք, որ պատմությունը ամբողջական կլինի միայն այն դեպքում, երբ նրա մեջ բոլոր նախադասությունները ճիշտ հերթականությամբ դասավորվեն:

Նախադասությունները կազմվում են ավելի փոքր միավորներից՝ բառերից: Սա աշակերտներին բացատրելու համար պետք է կիրառել տարաբնույթ «հնարներ»: Ընդունված, փոքր-ինչ ստանդարտ մոտեցում է այն, որ բառի մասին գաղափար կազմել տալու համար ուսուցիչը «դանդաղ, դադարներով արտասանում է նախադասությունը՝ յուրաքանչյուր բառի հետ ծափ տալով: Երեխաները նույնպես ծափ են տալիս և ուսուցչուհու օգնությամբ որոշում նախադասության մասերի թիվը»²: Այս ամենն ավելի տպավորիչ ու ազդեցիկ դարձնելու, գույներով ու դինամիկայով համեմելու համար կարելի է գունավոր կավիճներով գրատախտակին գծել նախադասության (*Արմենը սովորում է առաջին դասարանում*)՝ բառերի բաժանված գծապատկերը: Իբրև բառ է ներկայացվում նաև **է** օժանդակ բայը: Այնուհետև աշակերտներին պետք է հրահանգել, որ նախ գտնեն ուսուցչի սեղանին փակցված տարբեր գույների կպչուն թերթիկներից համապատասխան գույնի, համապատասխան քանակի թերթիկները, ապա դրանք փակցնեն գրատախտակին՝ գծապատկերի մասերի վրա:

Երբ աշակերտների համար պարզ ու հստակ է դառնում բառի սահմանները, պետք է բացատրել վանկը: Նպատակահարմար է վանկերը բացատրելիս աշակերտներին ցույց տալ այն առարկաները կամ նրանց նկարները, որոնք արտասանում են: Յուրաքանչյուր առարկայի անուն երեխաներն են ասում և ծափ տալով՝ այն բաժանում են մասերի և հաշվում մասերի քանակը: Սա օգնում է, որ երեխաները հասկանան, որ կան 1 ծափով, 2 ծափով, 3 ծափով արտասանվող բառեր, և որ ծափերի քանակը կախված է բառի մասերի քանակից: Ծանոթանալով իրենց համար մինչ այդ անծանոթ իրողությանը՝ բառի նոր մասին, աշակերտներն աստիճանաբար սովորում են նաև գործածել այդ մասերի անվանումը՝ վանկ:

²Նույն տեղում, էջ 44:

Հարկ է նկատել, որ այստեղ ևս գործ ունենք մասնատման, տարրալուծման սկզբունքի հետ, ուստի կարելի է օգտագործել բազմաթիվ առարկաներ, իրեր, խաղեր և այլ նյութեր, որոնցով կարող ենք ցույց տալ ամբողջի՝ մասերի բաժանվելու եռությունն ու այդ մասերի կարևորությունը ամբողջի համար: Դրա համար կարող ենք օգտագործել ծաղիկներ (առանձնացնել դրանց թերթիկները), «փազլ» (առանձնացնել և նորից միացնել դրա մասերը) և այլն:

Լեզվի ամենափոքր միավորը հնչյունն է: Հնչյունի մասին տեղեկություն է տրվում բառի բաղկացուցիչ մասի՝ վանկի մասնատմամբ: Օրինակ՝ ուսուցչի հանձնարարությամբ երեխաներն ասում են միավանկ բառեր: Ուսուցիչը դրանցից ընտրում և գրատախտակին գծում է այդ բառերի գծապատկերները, որոնք թեև միավանկ են, բայց ունեն տարբեր քանակի հնչյուններ (*բու, փիղ, գիրք* և այլն): Աշակերտներին հարց է ուղղվում, թե ինչու՞ են գծապատկերները տարբեր: Քննարկումը կտանի նրան, որ աշակերտները գլխի կընկնեն, որ բառերը տարբեր են՝ երկար ու կարճ արտասանությամբ, այսինքն՝ կան շատ և քիչ մասեր ունեցող բառեր (նախկին փորձերը նկատի ունենալով՝ կարելի է ենթադրել, որ աշակերտները լավ պատկերացնում են ամբողջի մաս հասկացությունը):

Անհրաժեշտ է, որ այս փուլում աշակերտները գաղափար կազմեն ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին: Այդ նպատակով կատարվում է որևէ բառի հնչյունալին վերլուծություն: Կարդալով հնչյուններն առանձին-առանձին՝ ուսուցիչն արտահայտիչ է դարձնում դրանց տարբերությունները (ձայնավորները արտաբերվում են երկար, առանց դժվարության, իսկ բաղաձայնները ինչ-որ մի պահից կորչում են): Սա կատարվում է աշակերտների ակտիվ մասնակցությամբ, այնքան են արտասանում տարբեր հնչյուններ, միչև որ իրենց համար ակնհայտ ու պարզ դառնա ուսուցչի ասածը:

Այս ամենին հետևում է բառի հնչյունային վերլուծությունը, երբ աշակերտն արտասանում է բառը, առանձնացնում բառի կազմի մեջ մտնող հնչյունները, տարբերակում է երկար և կարճ արտասանվող հնչյունները: Աշակերտներին կարելի է հանձնարարել, որ ներկեն բառի գծապատկերի փոքրիկ վանդակները համապատասխան գույներով (ձայնավորները՝ կարմիր, բաղաձայնները՝ կապույտ): Այս տարիքից արդեն աշակերտներն սկսում են բացատրել, նկարագրել լեզվական տարբեր իրողություններ, որոնք հիշեցնում են լեզվական պարզագույն սահմանումներ:

Նախաայբբենական շրջանի կարևոր գործառույթներից է նաև աշակերտին գրելուն նախապատրաստելը: Դրա համար կիրառվում են տարբեր մեթոդներ: Սովոր-

րաբար սկսում են նկարչությունից, ծեփից, ապլիկացիայից և մատների մանր ֆալանգների ամրացման, դաստակի մարզման վարժություններից:

Այս ամենը միտված է հասնելու գրաճանաչության նախաայբբենական փուլի համար հանրակրթական դպրոցի առարկայական ծրագրով նախատեսված նպատակների իրականացմանը:

1.2.Գրաճանաչության ուսուցման այբբենական շրջանի կրթադաստիարակչական առանձնահատկությունները

Գրաճանաչության փուլի **այբբենական շրջանը** նպատակ ունի լուծելու մի շարք կարևոր խնդիրներ՝ հայերենի բոլոր հնչյուն-տառերի ուսուցումը, պարզ բնագրերի ընթերցանության համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը, խոսքի զարգացումն ու կատարելագործումը և այլն:

Հնչյուն-տառերի ուսուցումը կատարվում է հնչյունից տառ ուղղությամբ: Աշակերտը նախ պիտի լիովին ընկալի հնչյունը, տարբերակի այն, ապա նոր անցնի նրա գրավոր արտահայտությանը: Դրա համար հարկավոր է հետևողականորեն կատարել բազմաթիվ վարժություններ: Օրինակ՝ կարելի է կազմակերպել այնպիսի երգերի ունկնդրում ու կատարում, որոնցում հաճախադեպ են տվյալ հնչյունը ներառող բառերը: Այս ամենի միջոցով աշակերտն ամբողջությամբ կընկալի հնչյունը, կգտնի դրա տեղը բառի մեջ, առանց դժվարության այդ հնչյունով նոր բառեր կասի:

Հաջորդ քայլը հնչյունի գրավոր նշանի՝ տառի մասին գաղափար տալն է: Տառերի ուսուցումը ևս պետք է կազմակերպել՝ գերազանցապես հենվելով աշակերտների զգայարանների վրա: Դրա համար պետք է տառուսուցման ավանդական մեթոդներին գումարել այլընտրանքային լուծումներ: Համացանցում տարածված են մի շարք տեսանյութեր³ այս կամ այն տառի ուսուցման վերաբերյալ: Դրանք գունավոր են, տրամադրող, պատկերավոր: Ամեն տառի ուսուցման ժամանակ կարելի է դիտել մի տեսանյութ: Այն կօգնի աշակերտներին տառն ընկալել

³https://www.youtube.com/watch?v=o9_GZMVS2QA (Հասանելի է՝ 09.08.2023թ.):

տեսողական (այդ հնչյունով սկսվող նկարներ, պատկերներ և այլն), լսողական (անընդհատ կրկնվում են հնչյունները՝ երգի, բանաստեղծությունների մեջ, հաճախ ընթերցողները երեխաներ են, ինչը կարևոր հանգամանք է), զգայական (այդ մուլտֆիլմ-տեսանյութերը կարող են տարբեր զուգորդումներ, զգացողություններ ու հիշողություններ արթնացնել, որոնք հետագայում կկապվեն այս կամ այն հնչյուն-տառի հետ) կողմերով:

Չափազանց կարևոր է գրելու տեխնիկայի դրվածքի մշակումը: Դրան մասնակցում են մեծ թվով զգայարաններ: Գրել սովորելու սկզբնական փուլում անհրաժեշտ է ամեն գրելուց առաջ մկանները բացող վարժություններ կատարել, ուշադրություն դարձնել մարմնի դիրքին, մատիտ կամ գրիչ բռնելու ձևին, որովհետև այդ ամենը վայելչագրությանը, ողնաշարի ճիշտ ձևավորմանը, մատների ճկունությանը նպաստող նախադրյալներ են:

Երեխան նախ լսում է հնչյունը, հետո տեսնում է նշանը, այնուհետև մարմինը «պատրաստում է» գրին, որից հետո միայն հստակ հրահանգով և հաշվումով գրում է: Ճիշտ գիրն ունի առողջապահական, մանկավարժական և հոգեբանական կողմեր, որոնց համալիր ապահովումը նպաստում է առողջ, ժամանակի զգացողություն ունեցող կոկիկ ու բարեկիրթ քաղաքացու ձևավորմանը: Տառի գրության ուսուցումով սկսվում է տետրի հանդեպ վերաբերմունքի դրսևորումը, աշխատելու որոշակի տեմպին վարժվելը, ուշադրության կենտրոնացումը, գրածին համապատասխան գնահատվելու գիտակցումը: Տառի ամրապնդման համար կարելի է օգտագործել տարբեր նյութեր՝ ավագ, որի վրա աշակերտը մատով կպատկերի նոր անցած տառը, ճկվող լարեր կամ թելեր, որոնք ձևափոխելով՝ կստանա տվյալ հնչյունի նշանը և այլ զանազան միջոցներ:

Տառերի ուսուցման հաջորդականության համակարգը մշակելիս հաշվի է առնված ոչ միայն տառերի հաճախությունը, արտասանական և գրաֆիկական պարզությունն ու մատչելիությունը, այլև մեկը մյուսի հետ ձուլվելու, բառի մեջ իրար հետ օգտագործվելու հնարավորությունը, ինչպես որ նպատակահարմար է *ը-ի* ուսուցումն սկսել *ն*, *մ*, *ղ* հնչյուն-տառերն անցնելուց հետո, քանի որ *ը-ն* բառասկզբում օգտագործվում է միայն այդ տառերից առաջ⁴:

Միաժամանակ պետք է նկատի ունենալ, որ երեխայի լսողությունը դեռևս սովոր չէ բարդ բաղաձայններին ($\psi = \psi + h$, $\rho = \rho + h$, $\theta = \theta + h$, $\delta = \delta + q$, $\delta = \delta + u$, $g = g + u$, $z = z + d$,

⁴Հանրակրթական ավագ դպրոցի առարկայական չափորոշիչներ և ծրագրեր. Հայոց լեզու, գրականություն, 2009, ԿԳՆ-ի կրթական ծրագրերի կենտրոն:

$\delta=nt+2$, $\xi=\theta+2$), ուստի դրանք պետք է անցնել այն ժամանակ, երբ երեխայի մոտ մշակվել է հնչարտաբերական համապատասխան լսողություն⁵:

Մանկավարժորեն հիմնված է նաև գրաճանաչության ուսուցման առաջին փուլում օժանդակ բայի շրջանցումը: Երբ երեխային սովորեցնում ենք օժանդակ բայը կարդալու ժամանակ հենվել բանավոր խոսքի վրա, նրա կողմից օժանդակ բայն առանձին բառ չի դիտվում և շատ հաճախ գրում են նախորդ բառի հետ միասին: Իսկ եթե հենվում ենք տեսողության վրա, այն գրվում և արտասանվում է առանձին: Առաջին դեպքում միասին գրելն է սխալ, երկրորդ դեպքում՝ առանձին արտասանելը: Միաժամանակ օժանդակ բային վերաբերող ուղղախոսական այս կանոնը կայուն չէ և չի տարածվում բոլոր դեպքերի վրա:

Եթե «*Կարդացողն իմ ընկերն էր*» նախադասության մեջ օժանդակ բայն արտասանվի նախորդ բառի հետ, միտքը կաղավաղվի, որովհետև ստորոգյալը կընկավի որպես հոգնակի թվով գոյական(ընկերներ):

Ուրեմն նպատակահարմար է խուսափել օժանդակ բայի ուսուցումից այնքան ժամանակ, քանի դեռ երեխայի մեջ չի ստեղծվել ու ամրապնդվել «բառ» հասկացության ինչպես ներքին, այնպես էլ արտաքին կողմը:

Փորձենք առաջարկել մեթոդական մի շարք հնարներ, որոնք մատնանշելու են ուսուցման հաջորդայնությունը և նպաստելու են «**հնչյուն-վանկ-բառ, նախադասություն-տեքստ**» վերլուծական–համադրական շղթայի արդյունավետ ներդրմանը երկրորդ դասարանում:

Է և Ե, օ և ո հնչյուն -տառերի ուսուցումը: Սովորաբար գրաճանաչությունն ընթանում է հնչյունից տառ ճանապարհով, սակայն այս հնչյունների տարբերակման համար ընթանում ենք տառից հնչյուն ուղիով: Դիտարկենք վերոնշյալ հնչյունների տարբերակման մի քանի հնարներ, որոնք ստեղծագործական աշխատանքի տարրեր են պարունակում:

Շատ տարածված է այն հանձնարարությունը, որով պահանջվում է բնագրից դուրս գրել երկհնչյուն ունեցող բառերը: Սակայն միայն այս տիպի աշխատանքները պարզունակ են և չեն խթանում սովորողի երևակայությունն ու ստեղծագործական միտքը, չեն նպաստում մտածողության տարբեր տիպերի զարգացմանը:

Քանի որ երկհնչյուն տառերը հիմնականում բառասկզբում են այդպես հնչում, ուստի կարելի է գրել մի նախադասություն, ուր բոլոր բառերը սկսվեն **ե-ով**: Օրինակ՝ «*Երկնքում երամ երևաց*»: Ուսուցիչը հանձնարարում է արագ հաշվել, թե յուրաքանչյուր նախադասության մեջ քանի՞ տառ կա և քանի՞ հնչյուն (ո՞վ ավելի արագ

⁵Գյուլամիրյան Ջ., Գրել-կարդալ սովորեցնելու ամենահարմար տարիքը, Մանկավարժություն-5-6, 2009, էջ 48-55:

կհաշվի): Այնուհետև փոխվում է հանձնարարությունը. հաշվել, թե ամեն նախադասության մեջ քանի՞ տեղ է **ե-ն** արտասանվում **յէ**, և քանի տեղ՝ **է**: Նույնատիպ առաջադրանք կարելի է տալ և **n** հնչյունի գրությունն ու արտասանությունն ամրապնդելու համար: Օրինակ՝ «Որտորդը ոգնի որոնեց»:

Կարելի է հետաքրքրաշարժ դարձնել առաջադրանքը և առաջարկել բացատրությունից գուշակել, թե ո՞ր բառերն են թաքնված բերված վանդակներում:

--	--	--	--

Ո-ով սկսվող կենդանու անուն, որը վախից գունդուկծիկ է դառնում:

--	--	--	--	--

Ո-ով սկսվող կենդանու անուն, որի խումբը հոտ է կոչվում:

--	--	--	--

Ե-ով վերջացող առարկայի անուն, որի մեջ ճաշ են լցնում:

Նմանատիպ առաջադրանքներ երեխաները կարող են իրենք կազմել, ինչը կնպաստի նրանց ստեղծագործական, լեզվական, տրամաբանական կարողությունների զարգացմանը:

1.3.Գրաճանաչության ուսուցման հետայբբենական շրջանի կրթադաստիարակչական առանձնահատկությունները

Գրաճանաչության **հետայբբենական փուլի** գերխնդիրն է աշակերտների ստացած գիտելիքների կատարելագործումը, խորացումը, ամրապնդումը, ձեռք բերած հմտությունների, կարողությունների զարգացումը, դրանց փոխադրումն ավելի բարձր մակարդակի:

Եթե նախայբբենական և այբբենական շրջանում ուսումնական նյութի մատուցման ճիշտ հաջորդականությունը համարվում է **պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն-տառ** շղթան, ապա հետագայում լեզվական նյութի կրկնությունը, ամրապնդումն ու համակարգումը կատարվում է հակառակ հաջորդականությամբ՝ **տառ-հնչյուն-վանկ-բառ-նախադասություն-ամբողջական պատմություն**:

Այս փուլում գերխնդիր է ընթերցանության կարողությունների մշակումը: Եթե նախորդ փուլերում ցանկալի արդյունք էր, օրինակ՝ կարճ բառերը հնչյուն առ հնչյուն կարդալը, ապա այս փուլում ընթերցանության առջև դրվում են նոր պահանջներ՝ կարդալ ավելի արագ, հստակ, սահուն, արտահայտիչ և այլն: Եթե նախկինում գնահատվում էր տառի գրության ճիշտ դիրքը, չափը և այլն, ապա այս փուլում դրանց

գումարվում են վայելչագրության նոր պահանջներ՝ տառի դիրքը բառերում, բառերի հեռավորությունն իրարից և այլն: Այս փուլում ակտիվ աշխատանք է տարվում նաև աշակերտների բառապաշարի, խոսքային գործունեության կարողությունների հղկման ուղղությամբ: Դրա համար պետք է ուշադրություն դարձնել բնագրերում հանդիպող բոլոր նոր բառերին, հանգամանորեն բացատրել դրանք, կիրառել շատ օրինակներում և այլն: «Մեթոդապես կարևոր է, որ նոր սովորած բառերը դառնան կրտսեր դպրոցականի ոչ միայն պասիվ, այլև ակտիվ բառապաշարի անբաժանելի մասը»⁶: Որոշակի պարբերականությամբ կարելի է կազմակերպել խաղեր՝ միտված նոր սովորած բառերի վերհիշմանը, ամրապնդմանը: Օրինակ՝ աշակերտներին կարելի է բաժանել խմբերի, խմբի անդամներից մեկի ականջին ասել սովորած բառերից մեկը և հրահանգել, որ նա բացատրի այդ բառի իմաստն առանց բառն օգտագործելու: Թիմի մյուս անդամները պետք է գուշակեն այդ բառը: Որ թիմն ավելի շատ բառեր կկարողանա գուշակել, նա էլ կհաղթի: Չպետք է մոռանալ ավանդական մեթոդների մասին՝ բառերով կազմել կապակցված խոսք, նոր նախադասություններ, բառատեսիլներում գրանցումներ կատարել և այլն:

Կարող ենք առաջին դասարանը համարել հիմնային աստիճան, որովհետև այս փուլում աշակերտն սկսում է ճանաչել բոլոր «գործիքները» (հնչյուն, տառ, բառ, բառակապակցություն, նախադասություն, տեքստ), սովորում կիրառել, իսկ հաջորդ դասարաններում ընդամենը մեծանում են կիրառության շրջանակները, փոխվում են իրադրությունները, կիրառության մեխանիզմները:

ԳԼՈՒԽ II

ԳՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՀԱԶՈՐԴԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄԸ 1-4-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

2.1. Ուսուցանող գրավոր աշխատանքների կազմակերպումը

Սովորաբար գրավոր խոսքի մեջ սկզբնական շրջանում ուսուցչի ուշադրության կենտրոնում են լինում նախ վայելչագրությունն ու ուղղագրությունը, այնուհետև՝ կետադրությունը, մտքերի շարահյուսական ճիշտ կառուցվածքն ու ներքին խոսքը: Բացի տարբերակիչ կողմերից, գրավոր խոսքն ունի նաև տեսակներ, որոնց առաջ-նահերթությունները փոխվում են՝ ըստ ուսումնառության փուլերի:

⁶Կ. Թորոսյան, Պատմվածքի ուսուցումը՝ կրտսեր դպրոցականի խոսքի և մտածողության զարգացման միջոց, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 2016, թիվ 2, էջ 6:

Առաջին դասարանում մեծ նշանակություն ունի **արտագրությունը**, որն էլ գործադրվող գրավոր աշխատանքների հիմնական տեսակներից մեկն է: «Արտագրելիս աշակերտը օրինակի վրա տեսնում է գրելիք բառի պատկերը, արտասանում, ուրեմն և լսում է բառի հնչյունային կազմը, այն գրելու համար ձեռքի որոշակի շարժումներ է անում, որոնք տեսնում և զգում է, և, ի վերջո, տեսնում է իր գրած առանձին տառերի համադրումից ստացված նոր բառապատկերը: Տեսողական, լսողական ու մկանաշարժողական ընկալումների այսպիսի զուգակցման շնորհիվ աշակերտի մեջ բառաձևերի ավելի ճկուն ու կայուն մտապատկերներ են ստեղծվում»⁷: Արտագրությունն ունի նաև հոգեբանական կողմ. առաջին դասարանցու համար սկզբնական շրջանում շատ կարևոր է վստահ լինել իր արարծի մեջ, հնարավորություն ունենալ՝ համոզվելու արածի ճիշտ կամ սխալ լինելու մեջ, և արտագրությունը տալիս է այդ հնարավորությունը. երեխան կասկածելու պատճառ չունի, քանի որ աչքի առաջ է այն, ինչն արտագրում է, և ամեն բոլոր նա կարող է ստուգել իրեն: Արտագրությունը սովորաբար սկսվում է աշակերտի տեսքում ուսուցչի տված օրինակից և հետզհետե բարդանում է ու ծավալվում:

Առաջին դասարանի ավարտին պետք է հասնել նրան, որ սովորողի մեջ մշակված լինի ամբողջական բառերով արտագրելու կարողություն: Ընթանալով պարզից բարդ ճանապարհով՝ ընդօրինակման արտագրություններից հետո աշակերտն սկսում է հմտանալ նաև ստեղծագործական բնույթի արտագրություններում: Այս տիպի արտագրությունները միանգամից երկու ուղղությամբ են ընթանում. աշակերտը և՛ արտագրում է, և՛ որոշակի առաջադրանք է կատարում:

Տարրական դասարանների առաջին փուլերում գործածական է թելադրության երեք տեսակ՝ **հնչյունային, նախազգուշական և ինքնաթելադրություն**: Հաջորդ փուլերում կիրառելի են նաև **սովորական, ստեղծագործական, բացատրական և ստուգողական թելադրությունները**: «Թելադրության միջոցով աշակերտներին գիտակցել ենք տալիս հայերենի գրության ու արտասանության միջև եղած տարբերությունները, վարժեցնում ենք սովորած ուղղագրական, ուղղախոսական, քերականական ու կետադրական գիտելիքների գործադրման մեջ, հարստացնում ենք նրա բառապաշարը, սովորեցնում ենք խոսք կառուցել»⁸: Թելադրության տեսակները ևս հաջորդաբար փոխում են իրենց առաջնահերթությունները՝ կապված սովորողների

⁷Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980, էջ 431:

⁸Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980, էջ 44:

Ֆիզիկական հնարավորությունների, մտածողության զարգացման և կուտակված բառապաշարի հետ:

Երկրորդ դասարանում, երբ արդեն բանավոր հաղորդակցումը որոշակի մակարդակի վրա է, կարելի է սկսել փոքրիկ **փոխադրություններ** հանձնարարել՝ նախապես հարցաշար (պլան) կազմելով՝ և թեմայի շուրջ գրույցներ կազմակերպելով, որպեսզի երեխան պատկերացնի շարադրանքի շրջանակները և զգա, որ փոխադրությունը բանավոր վերապատմումի գրավոր տարբերակն է: Դրանից հետո մի քանի հոգի պատմում են, մյուսները լրացումներ են անում, որից հետո արդեն կարելի է անցնել գրավորին: Այն պիտի լինի սեղմ, հակիրճ նախադասություններից կազմված: Ու որպեսզի երեխաների համար այդ աշխատանքը օտար և սարսափելի չթվա, կարելի է սկսել կարդացած բնագրի փոխադրումից, որը նրանց համար մի յուրատեսակ ինքնաթելադրություն է՝ որոշակի կրճատումներով: «Փոխադրություն գրելիս հիմնական դժվարությունը ընկալած բովանդակությանը ձև տալը, մինևույն միտքը այլ ձեվով արտահայտելն է: Հայտնի է, որ աշակերտը կապակցված նյութի բովանդակությունն ավելի ոյուրությամբ է ընկալում, քան լեզվական ձևերը, որոնք նույնությամբ հիշել չի կարող, ուստի հարկադրված է մինևույն միտքը այլ ձևով՝ իր բառերով ու լեզվամտածողությամբ արտահայտել, որի մեջ ևս դրսևորվում է աշակերտի ինքնուրույնությունը»⁹: Փոխադրումները տանը կատարելով՝ անշտապ, հանգիստ պայմաններում, սկզբում ծնողի օգնությամբ, հետո արդեն ինքնուրույն, աշակերտը հմտանում է այդ տեսակի գրավոր աշխատանք կատարելու մեջ և քայլ առ քայլ վարժվում է ստեղծագործական գրավոր աշխատանքի:

Գրավոր խոսքի տեսակներից է **շարադրությունը**, որը, գրավոր մյուս տեսակներին բնորոշ հատկություններից բացի մեծապես նպաստում է սովորողի ոչ միայն անհատականության, այլև տրամաբանական մտածողության զարգացմանը, բարոյական հատկանիշների ձևավորմանը: Փոխադրումների միջոցով ինքնուրույն միտք շարադրելուն ընտելանալուց հետո կարելի է հանձնարարել շարադրություն գրել կոնկրետ թեմայով՝ կապված անցած կամ ծանոթ նյութի հետ: Շարադրություն գրել հանձնարարելուց առաջ դարձյալ պետք է գրույց կազմակերպվի գրելիք թեմայով, թեման քննվի բոլոր կողմերից, որպեսզի երեխայի միտքը չսահմանափակվի մի տարբերակի շրջանակներում, միաժամանակ ընդլայնվի երեխայի մտահորիզոնը:

⁹Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա., Երևան, «Լույս» հրատ., 1980, էջ 462:

Անհրաժեշտ է սկզբում թեմատիկ բառեր և բառակապակցություններ տալ, գրուցել դրանց շուրջ, պարզաբանել գործածության շրջանակները, մեկնաբանել երեխաների հարցադրումները, երևույթը կամ առարկան տարբեր կողմերից քննել, որպեսզի միակողմանի չլինեն նրանց պատկերացումներն ու շարադրանքը: Գրավոր շարադրանքին նախորդում է բանավորը: Առաջին և երկրորդ դասարաններում քանակապես կարող է ավելին լինել, քան գրավոր շարադրանքը:

Երրորդ և չորրորդ դասարաններում պիտի գերակշռեն գրավոր շարադրությունները: Շարադրություն գրել սովորեցնելու գործում մեծ է թեմայի ընտրությունը, այն պիտի լինի երեխայի հետաքրքրությունների շրջանակում: Մտքերի տրամաբանական հաջորդականությունը պահպանելուն վարժեցնելու նպատակով անհրաժեշտ է սկզբնական շրջանում տալ հեռակետային բառեր, թեմատիկ բառարան և պլան կազմել: Սկզբնական շրջանում շատ օգտակար են նկարագրական շարադրությունները, որոնք զարգացնում են երեխաների դիտողականությունը: Իսկ երբ շարադրություններ են գրում կարդացած նյութի շուրջ, այդ ժամանակ երեխաները սովորում են վերլուծել, համադրել, եզրակացություններ անել, սեփական դիտարկումներ կատարել, որոնք զարգացնում են նրանց տրամաբանական և ստեղծագործական մտածողությունները: Երրորդ և չորրորդ դասարաններում կարելի է խորացնել շարադրությունների ստեղծագործական բնույթը՝ հանձնարարելով շարունակել տրված սկիզբը, հորինել վերջաբան կամ միջևամաս, տրված բնագիրը տրոհել պարբերությունների և վերնագրել յուրաքանչյուր հատված:

Գրավորների երեք տեսակների կիրառման հաջորդականությունն ու գործողության ելակետը տարբեր են: Երեխան նախ արտագրություն է անում, և նրա գործողության ելակետը բառի գրաֆիկական պատկերն է, այսինքն՝ տեսողական մտապատկերը, այնուհետև թելադրությունը, որի ժամանակ ելակետը հնչյունային ձևն է, նոր միայն գրաֆիկական պատկերը, այսինքն՝ լսողականին հաջորդում է տեսողական մտապատկերը: Երրորդ փուլում երեխան անցնում է փոխադրություն և շարադրություն գրելուն, և ելակետը կազմում է գրածի բովանդակության պարզ գիտակցումը, որին հաջորդում է բառի հնչյունային ձևը, իսկ վերջինիս հիման վրա վերականգնվում է բառի գրաֆիկական ձևը:

Գրավոր խոսքի մեջ են մտնում **գործնական** տարբեր գրություններ: Երեխաները պիտի սովորեն գրել իրենց հասցեն, ծնողների աշխատավայրերն ու զբաղմունքը, կազմեն դասարանական հերթապահության ցուցակ, օրագրում

լրացնեն դասացուցակը, գրեն նամակ, հայտարարություն, գրավոր հարց ձևակերպեն և պատասխանեն տրված հարցերին և այլն:

Տարրական դասարաններում անհրաժեշտ է գրավոր խոսքի հանդեպ պատշաճ վերաբերմունք ձևավորել, որի նախապայմաններից մեկն էլ գրավոր խոսքի պարզ, հստակ, հասկանալի ձևակերպումն է: Կարդալով նման խոսք՝ երեխան պատասխանատվություն է ստանձնում կազմելու նմանօրինակ խոսք: Դրան հասնելու ճանապարհներից մեկը դասագրքերում առկա կամ ուսուցչի ճիշտ կազմած առաջադրանքներն են: Սա նշանակում է, որ զանազան թեստերում զետեղված առաջադրանքները պիտի լինեն պարզ, ընկալելի ու մատչելի, համապատասխանեն աշակերտի կարողություններին, ստեղծագործելու հնարավորությունն տան, զարգացնեն սովորողի տրամաբանությունը, համադրություններ անելու և կշռադատելու կարողություն ձևավորեն, ձեռք բերած գիտելիքն ու այն գործադրելու կարողությունը վերածեն հմտության:

Եթե բանավոր խոսքի արտահայտչականությանը կարող է նպաստել նաև «մարմնի լեզուն», ապա գրավոր խոսքը զուրկ է բանավոր խոսքի այդ առավելությունից: Եվ մարդկությունն իր պատմության ընթացքում գրավոր խոսքին ևս արտահայտչականություն հաղորդելու համար ստեղծեց կետադրությունը:

2.2. Կետադրության ուսուցումը

Կետադրության մեջ վարժված լինելը նույնքան բնականոն պիտի լինի, որքան տառերն ու բառերը ճանաչելը: Առանց կետադրության գրավոր խոսքը ոչ միայն լիարժեք չէ, այլև հավաստի, քանի որ շատ հաճախ կետադրությունը նախադասության իմաստը կարող է հիմնավորապես փոխել: Տրամաբանական ու գիտական հաջորդականությամբ է ուսուցանվում նաև կետադրությունը:

Տարրական դպրոցում կետադրության ուսուցումը սկսվում է վերջակետի ուսուցմամբ, քանի որ նախադասության ուսուցման մեջ կարևոր է վերջակետի գիտակցումը: Առաջին դասարանի երկրորդ կիսամյակից արդեն երեխան ծանոթ է նախադասությանը, ուստի նաև գիտի, որ յուրաքանչյուր նախադասություն մյուսից տարբերվում է վերջակետով: Եթե ուսուցիչը բնականոն հետևի, որ ամեն անգամ աշակերտը հարկ եղած դեպքում նշանակի վերջակետը, ապա աշակերտի մոտ այն կդառնա սովորություն: Շատ սխալ է, որ գրատախտակի մոտ գրելիս աշակերտը մոռանում է նախադասության վերջակետը, և ուսուցիչը, կենտրոնացած լինելով

ուղղագրության վրա, ամենևին չի պահանջում ուղղել սխալը: Այնուհետև ուսումնասիրում են ստորակետը, ուրիշի խոսքի դեպքում՝ միջակետը:

Երկրորդ դասարանից սկսվում է առոգանության նշանների ուսուցումը, որոնց աշակերտները ծանոթ էին դեռևս առաջին դասարանից՝ իբրև նշան, որպեսզի բնագրերը կարդալիս դրսևորեին արտահայտչության այդ ձևը: Կետադրության ընկալումը ևս զարգացնում է տրամաբանական մտածողությունը, որովհետև ճիշտ կետադրել նշանակում է բառերի միջև եղած կապերը տեսնել: Կարելի է խաղ կազմակերպել. երեխաներից մի քանիսը դառնան կետադրական նշաններ, իսկ մյուսները՝ առանձին բառեր, որոնք անհրաժեշտ հերթականությամբ կանգնելով՝ կազմել են նախադասություն: Տեսնելով, ապա լսելով նախադասությունը՝ կետադրական նշանները պիտի գան, գրավեն իրենց տեղերը:

Կարելի է ներկայացնել այնպիսի նախադասություններ, որտեղ սխալ կետադրության պատճառով միտքն աղավաղվել է կամ վերածվել հակառակ իմաստին (*Ներել, չի կարելի սպանել: Ներել չի կարելի, սպանել:*), պատմել կետադրության հետ կապված պատմություններ, հանձնարարել կետադրել համր բնագրեր: Նմանատիպ աշխատանքներին մասնակցում են նաև երեխաների զգայարանները, իսկ դա նշանակում է, որ ընկալումն ավելի խորքային կլինի:

Այսպիսով՝ գրավոր խոսքի ուսուցումը ևս պիտի ընթանա տրամաբանական հաջորդականությամբ՝ զարգացնելով երեխաների խոսքի արտահայտչականությունը, տրամաբանական մտածողությունը, մտքի ձևակերպման կարողությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կատարած աշխատանքի արդյունքում մենք հանգել ենք հետևյալ եզրակացությունների՝

- Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը փաստեց, որ գրաճանաճության յուրաքանչյուր փուլում ուսուցումը կազմակերպելիս պետք է հաշվի առնել երեխայի կազմաբնախոսական (զգայարանների և ֆիզիկական համակարգերի զարգացում), մտածողության աստիճանական զարգացման առանձնահատկությունները:
- Կրտսեր դպրոցականների գրելու կարողությունների ձևավորման ու զարգացման գործում գրաճանաչության յուրաքանչյուր փուլում էապես կարևորվում է տարիքային հոգեբանությունից բխող մեթոդների ընտրությունը:
- Գրավորի ամեն մի տեսակ ունի իր առանձնահատկությունները, հետևաբար նաև՝ ուսուցման յուրահատուկ մեթոդներն ու եղանակները:
- Գրավոր խոսքի ուսուցումը, ինչպես լեզվական մյուս միավորներինը, համակարգային է, այսինքն՝ մեկի յուրացումն անհրաժեշտ հիմք է մյուսի

յուրացման համար: Գրավորի ամեն մի տեսակ սովորողների մեջ ձևավորում է որոշակի հմտություններ ու կարողություններ:

- Առաջնությունը պետք է տալ աշակերտի ստեղծագործական կարողությունները զարգացնող, գրելու հմտություն մշակող տեսակներին:
- Որպեսզի աշակերտը զգա գրավոր հաղորդակցման կարևորությունը, պետք է նրան հնարավորություն տրվի գրելու իրեն ծանոթ և հուզող թեմաների մասին: Դա աշակերտին օգնում է գտնելու սեփական ձայնը, խթանելու հետաքրքրասիրությունը: Գրելը նաև ներքին ընկալումները խորացնելու հզոր միջոց է:
- Ուսուցողական նպատակով տրվող գրավորները թեմայի ուսուցման շարունակությունն են, ուսումնական գործընթացի անբաժանելի մասն են կազմում և ուսուցչին օգնում են տվյալ թեման ուսուցանելու ընթացքում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, «Չանգակ» հրատ., 2015:
2. Գյուլամիրյան Ջ., Գրել-կարդալ սովորեցնելու ամենահարմար տարիքը, Մանկավարժություն-5-6, 2009:
3. Թորոսյան Կ., Պատմվածքի ուսուցումը՝ կրտսեր դպրոցականի խոսքի և մտածողության զարգացման միջոց, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 2016, թիվ 2:
4. Հանրակրթական դպրոցի Հայոց լեզու և գրականություն առարկայական չափորոշիչ և ծրագրեր (1-9-րդ դասարաններ) ՀՀ ԿԳ նախարարի 29. 08. 2011 թ. N 1000 –Ա/Ը հրաման, <http://www.edu.am>:
5. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, «Լույս» հրատ., 1980:
6. https://www.youtube.com/watch?v=o9_GZMVS2QA (Հասանելի է՝ 09.08.2023թ.):

